

Մերն է ոգնշնչել մեր Երկնային Հորը ստեղծել մեր հոգիները, դա դրդեց մեր Փրկչին Գնթսնանի այգում Ինքն Իրեն փրկագին տալ մեր մեղքերի համար: Մերը փրկության ծրագրի մեծագույն շարժիչ ուժն է, դա նրջանկության, բժշկության մշտապես նորացող աղբյուր է՝ հույսի թանկագին ակնաղբյուր:

Երբ մեկնում ենք մեր ձեռքերը և սիրտը դնալի մյուսները Քրիստոսանման սիրով, ինչ-որ հրաշալի բան է տեղի ունենում մեզ հետ: Մեր հոգիներն ապաքինվում են, զարգանում և ամրանում: Մենք ավելի նրջանիկ ենք դառնում, ավելի խաղաղ և ավելի ընկալունակ Սուրբ Հոգու հուշումների հանդեպ:

Իմ ողջ սրտով և հոգով ես շնորհակալություն եմ հայտնում մեր Երկնային Հորը մեր հանդեպ Իր սիրտ համար, Իր Որդու պարգևի համար, Հիսուս Քրիստոսի կյանքի, օրինակի և Նրա անմեղ ու անձնուրաց զոհաբերության համար: Ես բերկրանք եմ ապրում այն փաստով, որ Քրիստոսը չի մահացել, այլ բարձրացել է գերեզմանից: Նա ապրում է և երկիր է վերադարձել՝ վերականգնելու Իր իշխանությունը և ավետարանը մարդու համար: Նա մեզ համար եղել է կատարյալ օրինակ, թե ինչպիսի տղամարդիկ և կանայք մենք պետք է լինենք: Այս Չատկի կիրակի, և ամեն օր նրբ ակնածանքով և պատկառանքով խորհենք, թե ինչպես է մեր Փրկիչը գրկում, սփռում ու բժշկում մեզ, եկեք պարտավորվենք դառնալ Նրա ձեռքերը, որպեսզի մեր միջոցով մյուսները զգան Նրա սիրալիր գրկախառնումը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 2 Նեփի 26.24, 25, 28; շնորհագրումն ավելացված է:
2. Տես Դուկաս ԺԷ.9-14:
3. Հռովմեացիս 4.23:
4. Վարդապետություն և Ուխտեր 18.10:
5. Սոսիա 18.9:
6. Տես Արմա 7.11-13; Վարդապետություն և Ուխտեր 19.16:
7. Առակաց ԺԷ.17
8. See Clarence Cook, "Abram and Zimri," in *Poems by Clarence Cook* (1902), 6-9.
9. Տես Մատթևոս ԻԲ.39:
10. Տես Մատթևոս Է.12:
11. Ա Կորնթացիս ԺԳ.1:
12. ՎեՌ 81.5
13. Մատթևոս ԻԲ.40
14. Տես Հուդա Ա.12:



Երնց Ռիչարդ Գ. Աքրթ
Տասներկու Առաքյալների Բվորումից

Ապրում է Նա, Փառք Նրա Անվան

Հիսուս Քրիստոսի Քավությանը հասկանալը և դրան հավատալը ուժ և ունակություն կարագնեն մեզ հաջողակ կյանքի համար:

Այսօր Չատկի առավոտ է, այս սուրբ օրը ողջ քրիստոնեական աշխարհը տոնում է Հիսուս Քրիստոսի հաղթանակը մահվան հանդեպ: Նրա Հարությունը քանդեց այն, ինչ այդ ժամանակ համարվում էր մահվան անկոտրում շղթա: Նա բացեց ուղին, որով երկրի վրա ծնված Երկնային Հոր զավակներից յուրաքանչյուրը հնարավորություն է ստանում մահից վեր բարձրանալ և կրկին ապրել:

Մեր Երկնային Հայրը, հավանաբար, հրճվում էր այդ սուրբ օրը, երբ Նրա լիովին հնազանդ, ամբողջովին արժանի Որդին փշրեց մահվան կապանքները: Ի՞նչ հավերժական նպատակ կունենար մեր Հոր նրջանկության ծրագիրը, եթե այն կյանքի չկոչվեր Նրա փառավոր և հնազանդ Որդու անսահման և հավերժական Քավության միջոցով: Ի՞նչ հավերժական նպատակ կունենար երկրագնդի Ստեղծումը, որտեղ բանական էակները հոգու հետ միասին մարմին պիտի ստանային, եթե մահը լինելու էր գոյության վերջնակետը և ոչ ոք հարություն չէր առնելու: Ինչպիսի փառավոր պահ էր այդ առավոտ բոլոր նրանց համար, ովքեր հասկանում էին դրա նշանակալիությունը:

Չատիկը այն սուրբ ժամանակն է, երբ ցանկացած նվիրյալ քրիստոնյայի սիրտը խոնարհ նրախտագիտությամբ դառնում է դնալի մեր սիրելի Փրկիչը: Դա այն ժամանակն է, որը պետք է խաղաղություն և ուրախություն բերի բոլոր նրանց, ովքեր սիրում են Նրան և ապացուցում են դա, պահելով Նրա պատվիրանները: Չատիկը բերում է մտքեր Հիսուսի, Նրա կյանքի, Նրա Քավության, Նրա Հարության, Նրա սիրտ մասին: Նա բարձրացավ մահից վեր՝ «իր թևերի մեջ ունենալով բժշկություն» (Մատթևոս 4.2; 3 Նեփի 25.2): Օ՛, որքան մենք բոլորս ունենք այդ ապաքինման կարիքը, որը կարող է տալ Քավիչը: Իմ ուղերձը հույսի ուղերձ է, հիմնված այն սկզբունքների վրա, որոնք մարմնավորված են Վարդապետ և Ուսուցիչ, Հիսուս Քրիստոսի ուսմունքներում:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները կարող են ավելի լիարժեք հասկանալ ապաքինման շունչը և խորությունը, որը տալիս է Նրա Քավությունը, որովհետև մենք ունենք Նրա վարդապետության լրիվությունը: Մենք հասկանում ենք, որ այն, ինչ Նա կամավոր արեց, անցնելով սաստիկ տառապանքների և զոհաբերության



լիովին գործող դարձրեց Նրա Երկնային Հոր նրջանկության ծրագիրը:

Հիտուսը կառավարում է արդարադատության և ողորմության միջև հավասարակշռությունը, որը պայմանավորված է Իր ավետարանին մեր հնազանդությամբ: Նա ողջ մարդկության լույսն է: Նա ողջ ճշմարտության աղբյուրն է: Բոլոր նրանք, ովքեր հնազանդվում են Նրա պատվիրաններին, կվաստակեն ամառվել փառավոր օրհնություններ, որ կարելի է պատկերացնել:

Առանց Քավության, Երկնային Հոր նրջանկության ծրագիրը չէր կարող լիովին արդյունավետ դառնալ: Քավությունը բոլորին հնարավորություն է տալիս հաղթահարել կյանքում կատարած սխալների հետևանքները: Երբ մենք հնազանդվում ենք օրենքին, մենք ստանում ենք օրհնություն: Երբ մենք խախտում ենք օրենքը, նախկին հնազանդությունից ոչ մի մնացորդ չի մնում, որ բավարարի այդ խախտված օրենքի արդարադատության պահանջները: Փրկչի Քավությունը թույլ է տալիս մեզ ապաշխարել անհնազանդությունից և դրանով խուսափել այդ արդարադատության պատժից:

Իմ պատկառանքը և նրախտագիտությունը Իսրայելի Սուրբի, Խաղաղության Իշխանի և մեր Քավիչի Քավության հանդեպ շարունակ մեծանում է, երբ ես աշխատում եմ ավելի շատ հասկանալ այդ մասին: Ես հասկանում եմ, որ ոչ մի մահկանացու միտք չի կարող պատշաճ ըմբռնել, ոչ էլ մարդու լեզուն կարող է պատշաճ արտահայտել այն ամենի նշանակությունը, ինչ Հիտուս Քրիստոսն արեց մեր Երկնային Հոր զավակների համար Իր Քավության միջոցով: Ինչն է, կարևոր է, որ յուրաքանչյուր սովորի այդ մասին, որքան կարող է: Քավությունը էական բաղադրիչն է մեր Երկնային Հոր նրջանկության ծրագրի, առանց որի այդ ծրագիրը չէր կարող գործել: Հասկանալով Քավությունը և ներշնչումը, որ այն տալիս է ձեր կյանքին, դուք ավելի արդյունավետ կօգտագործեք այն ողջ գիտելիքը, փորձը և ունակությունները, որ ձեռք եք բերում մահկանացու կյանքում:

Ես հավատացած եմ, որ օգտակար է փորձել պատկերացնել, թե

միջով, կազդի մեզ վրա ոչ միայն այս կյանքում, այլ հավերժության մեջ ևս:

Այս Չատկին, հիշելով Հարությունը, վճարված գինը և Քավության շնորհիվ տրված պարգևը, խորհեք այն մասին, ինչ սուրբ գրություններն ուսուցանում են այդ սուրբ նրկության մասին: Դրանց իրականության մասին ձեր անձնական վկայությունը կամրանա: Դրանք պետք է լինեն ավելին, քան սկզբունքներ հիշելու համար: Դրանք պետք է հյուսվեն ձեր էության հյուսվածքի մեջ որպես գորնդ պաշտպանություն պղծության այն աճող ալիքի դեմ, որը վարակում է մեր աշխարհը:

Լեքի մարգարեն խոր ճշմարտություն է հայտարարել, երբ ասել է. «Ուստի փրկագնումը Սուրբ Մեսիայի մեջ է և նրա միջոցով. Քանզի նա

լի է շնորհով և ճշմարտությամբ: Ահա, նա իրեն գոհ է մատուցում մեղքի համար՝ բավարարելու օրենքի պահանջները բոլոր նրանց համար, ովքեր ունեն կտրված սիրտ ու փշրված հոգի. և ուրիշ ոչ մեկի համար օրենքի պահանջները չեն կարող բավարարվել» (2 Նեփի 2.6–7): Այդ սուրբ գրությունը նշում է, որ հպարտների և մեծամիտների համար կարծես երբեք Քավություն չի եղել:

Հիտուս Քրիստոսն ապրում է: Նա մեր Փրկիչն է, մեր Քավիչը: Նա փառավոր, հարություն առած էսկ է: Նա ունակություն ունի հաղորդելու սեր, որն այնքան հզոր է, այնքան ցնցող, որ գերազանցում է դա պատշաճ արտաբերելու մարդու լեզվի ունակությունը: Նա տվեց Իր կյանքը՝ կտրելու համար մահվա կապանքները: Նրա Քավությունը

ինչ էր Քավոթյունը պահանջում և չորից և Նրա պատրաստակամ Ռոբոտ: Փրկչի հանդիպած նրեք խնդիրներն էին:

Առաջինը, պատասխանատվության ահեղի զգացում, քանզի Նա հասկանում էր, որ եթե դա կատարյալ չարվեր, Իր չոր զավակներից ոչ մեկը չէր կարող վերադառնալ Նրա մոտ: Նրանք ընդմիշտ կզրկվեին Նրա ներկայությունից, քանի որ ճանապարհ չէր լինի ապաշխարելու խախտված օրենքների համար, իսկ ոչ մի անմաքուր բան չի կարող գոյություն ունենալ Աստծո ներկայության մեջ: Նրա չոր ծրագիրը կտապալվեր և յուրաքանչյուր հոգևոր զավակ կլիներ Սատանայի հավերժական վերահսկողության և տանջանքների տակ:

Երկրորդ, Իր բացարձակորեն մաքուր մտքով և սրտով Նա անձամբ պետք է զգար այն հետևանքները, որ ողջ մարդկությունը երբևէ կունենար, անգամ ամենաթշվառ, ամենապիղծ մեղքը:

Երրորդ, Նա պետք է դիմակայեր Սատանայի բանակի կատաղի գրոհներին, մինչդեռ ֆիզիկապես և հոգեպես սեղմ սահմանների մեջ էր: Այա, մեզ համար ոչ լիովին պարզ պատճառներով, թեև Իր ունակության զագաթնակետին, երբ Փրկիչը առավել շատ աջակցության կարիք ուներ, Նրա Հայրը թույլ տվեց, որ Նա կրեր ծայրահեղ ծանր պատասխանատվությունը միայն Իր սեփական ուժով և ունակությամբ:

Ես փորձում եմ պատկերացնել, թե ինչպիսի վշտալի պահ պետք է որ լիներ մեր Երկնային Հոր համար, երբ Փրկիչը բացականչեց խաչի վրայից. «Իմ Աստուած՝ իմ Աստուած, ինչո՞ւ թողնցիր ինձ» (Մատթևոս ԲԷ.46; Մարկոս ԻԵ.34): Ես չեմ հավատում, որ Երկնային Հայրը մոռացել էր Իր Ռոբոտն խաչի վրա: Ես հավատում եմ, որ այդ կանչը պայմանավորված էր այն մշտական օգնության բացակայությամբ, որը Նա միշտ վայելել էր Իր չոր կողմից: Նրա Հայրը հասկանում էր, որ Փրկիչը պետք է կատարեր Քավոթյունը լիովին և ամբողջովին ինքնուրույն, առանց արտաքին օգնության: Հայրը չէր լքել Իր Ռոբոտն: Նա հնարավորություն տվեց Իր կատարյալ



Ռոբոտն վաստակել Քավոթյան հավերժական պտուղները:

Մահկանացու կյանքում մեզանից ոչ ոք չի կարող երբևէ ըստ պատշաճի գնահատել Քավոթյան լիարժեք բարերար հետևանքները:

Մեր բոլորի համար ծայրահեղ կարևոր է ամրացնել մեր հասկացողությունը Հիսուս Քրիստոսի Քավոթյան մասին, այնպես որ այն դառնա անսասան հիմք, որի վրա մենք կկառուցենք մեր կյանքը: Մինչ աշխարհը ավելի է հեռանում հիմնարար չափանիշներից, և մինչ հարգանքը, առաքինությունը և մաքրությունը մի կողմ են նետվում շահի որոնումների պայմաններում, Հիսուս Քրիստոսի Քավոթյունը հասկանալը և դրան հավատալը ուժ և ունակություն կպարզեն մեզ հաջողակ կյանքի համար: Դա նաև վստահություն կբերի փորձության պահին և խաղաղություն խառնաշփոթ ժամանակ:

Ես մեծապես խրախուսում եմ ձեզ ստեղծել անձնական ուսումնասիրության ծրագիր, որպեսզի ավելի լավ հասկանանք և գնահատենք Հիսուս Քրիստոսի կողմից որպես մեր Փրկիչ և Քավիչ Իր աստվածային կոչումը կատարյալ իրականացնելու անհամմատելի, հավերժական, անսահման հետևանքները: Մուրբ գրությունների խորը անձնական ուսումնասիրությունը և դրանց մասին խորհելը, սրտագին աղոթքը

կամրացնեն Նրա անգին Քավոթյան ձեր հասկացողությունը և գնահատումը: Հիսուս Քրիստոսի և Նրա Քավոթյան մասին սովորելու մեկ այլ գործը եղանակ է հաստատուն ձևով տաճար այցելելը:

Թող մեզանից յուրաքանչյուրը թարմացնի մեր տանը ճշմարիտ սկզբունքները սրբությամբ ուսուցանելու իր վճռականությունը: Այդպես մենք երջանկության մեծագույն հնարավորություն կտանք այն հոգիներին, որոնք վստահված են մեզ: Օգտագործեք Եկեղեցին որպես արդար գործիք տունը ամրացնելու համար, բայց հասկացեք, որ որպես ծնողներ մենք հիմնարար պարտականություն և արտոնություն ունենք՝ առաջնորդվելու Տիրոջով մեր խնամքին վստահված Նրա հոգևոր զավակներին մեծացնելիս:

Տանը ճշմարտությունն ուսուցանելու կենսական կարևորությունը հիմնարար է: Եկեղեցին կարևոր է, սակայն տներում է, որ ծնողները տալիս են պահանջվող հասկացողություն և ուղղություն երեխաներին: Ճիշտ է ասված, որ ժամանակի և հավերժության մեջ առավել կարևոր կոչումները հոր և մոր կոչումներն են: Կգա ժամանակ, երբ մենք կազատվենք մեր ստացած բոլոր հանձնարարություններից, բայց ոչ հոր և մոր պարտականությունից:

Երբ դուք խորհեք, ոչ թե միայն կարդաք, այլ խորհեք և մտորեք

սուրբ գրությունների հատվածների շուրջ, Սուրբ Հոգու զորությունը կենդանարկի ճշմարտությունները ձեր մտքի և սրտի մեջ որպես ապահով հիմք այս անորոշ ժամանակներում, որոնցում մենք ապրում ենք: Որպես ծնողներ պատրաստեք ձեր երեխաներին այն մարտահրավերներին, որոնց նրանք կհանդիպեն: Ուսուցանեք նրանց ճշմարտությունը, խրախուսեք նրանց ապրել ըստ դրա և նրանց հետ ամեն ինչ լավ կլինի, անկախ նրանից, թե որքան ուժգին կցնցի նրանց աշխարհը:

Այս Չատկին վճռեք Տեր Հիսուս Քրիստոսին դարձնել ձեր տան կենդանի առանցքը: Հետևեք, որ ձեր յուրաքանչյուր որոշում, լինի դա հոգևոր, թե ֆիզիկական բնույթի, առաջնորդվի այս մտքով. «Բ՞նչ կուզենար Տեր Հիսուս Քրիստոսը, որ ես անենի»: Երբ Փրկիչը ձեր տան կենտրոնն է, տունը լցվում է խաղաղությամբ և հանգստությամբ: Խաղաղ վստահության ոգի է ներխուժում այն տուն, որտեղ երեխաները և չափահասները նույն մտածելակերպն են կրում:

Դեպի լավը մշտական փոփոխություն կատարելու լավագույն ճանապարհը Հիսուս Քրիստոսին ձեր օրինակը, իսկ Նրա ուսմունքները՝ ձեր կյանքի ուղեցույցը դարձնելն է:

Եթե դուք անհնազանդ եք եղել Նրա պատվիրաններին և անարժան եք ձեզ զգում գալու, հասկացեք, որ այդ պատճառով է Տերը, Հիսուս Քրիստոսը, տվել Իր կյանքը: Իր Քավության միջոցով Նա ընդմիշտ բացել է նման սխալները հաղթահարելու, սխալ ընտրություններից ապաշխարելու և Նրա ուսմունքներին հակառակ կյանքով ապրելու բացասական հետևանքները վերացնելու հնարավորությունը:

Փրկիչը սիրում է մեզանից յուրաքանչյուրին և կբավարարի ցանկացած կարիք, եթե մենք հնազանդությամբ արժանի լինենք բոլոր օրհնություններին, որոնք Նա ցանկանում է, որ մենք ունենանք այս նրկանգնողի վրա: Ես սիրում եմ Նրան և հիանում եմ Նրանով: Որպես Նրա լիազորված ծառայող ես հանդիսավորությամբ վկայում եմ իմ էության ողջ ունակությամբ, որ Նա ապրում է, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■



Երեց Դոնալդ Լ. Հոլսթրոմ
Յոթանասունի Նախագահությունից

Դարձեք դեպի Տերը

Երբեք թույլ մի տվեք աշխարհի հանգամանքները ձեզ հոգևոր վնաս պատճառել:

Տարիներ առաջ, ես ականատես եղա մի ցավալի դեպքի, որը դարձավ ողբերգություն: Մի երիտասարդ զույգ շուտով ունենալու էր իր առաջնեկին: Նրանց կյանքը լի էր սպասումով, և նրանք ոգևորված էին այդ սքանչելի իրադարձությամբ: Ծննդաբերության ժամանակ բարդություններ առաջացան և նորածինը մահացավ: Սրտի ցավը վերածվեց վշտի, վիշտը՝ բարկության, բարկությունը մեղադրանքի, իսկ մեղադրանքը վերածվեց վրեժխնդրության՝ հանդեպ բժիշկը, որին լիովին պատասխանատու էին համարում: Ծնողներն ու ընտանիքի մյուս անդամները, միանալով ձգտում էին խորտակել բշկի համբավը և կարիերան: Երբ արդեն շաբաթներ և ապա ամիսներ տևած դառնությունը հյուծել էր ընտանիքին, նրանց դառնությունը դարձավ դեպի Տերը: «Ինչպե՞ս կարող էր Նա թույլ տալ նման սոսկալի բան»: Նրանք հրաժարվում էին Եկեղեցու դեկավարների և անդամների հոգևոր սփոփանքից և ժամանակի ընթացքում հեռացան Եկեղեցուց: Դա այժմ արդեն իր ազդեցությունն է թողել այդ ընտանիքի չորս սերունդների վրա: Եթե մի ժամանակ Տիրոջ և Նրա Եկեղեցու հանդեպ հավատք և նվիրվածություն կար, այժմ արդեն տասնամյակներ է, ինչ այդ ընտանիքի ոչ մի անդամ հոգևոր ակտիվության մեջ չէ:

Կյանքի ամենադժվար իրավիճակներում հաճախ կա խաղաղության միայն մեկ աղբյուր: Խաղաղության Իշխանը՝ Հիսուս Քրիստոսը, Իր շնորհն է առաջարկում, հրավիրելով. «Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթեոս ԺԱ.28-29): Այնուհետև Նա խոստանում է. «Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ոչ թե ինչպես աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ» (Հովհաննես ԺԴ.27):

Իմ հայրական տատիկն ու պապիկը երկու զավակ ունեին՝ որդի (իմ հայրը) և դուստր: Հավայան կղզիներում միսիա և զինվորական ծառայություն կատարելուց հետո, հայրս կղզիներ վերադարձավ 1946թ.՝ որպես մասնագետ հաստատվելու և իր ընտանիքը մեծացնելու համար: Նրա ծնողները և քույրը ապրում էին Սուր Լեյք Սիթիում: Նա ամուսնացավ 1946թ. և չորս տարի անց երեխա էր սպասում: Մի շատ հատուկ բան կա ծնողների համար, ովքեր սպասում են իրենց դստեր (այս դեպքում միակ դստեր) առաջին ծննդաբերությանը: Ոչ ոք չգիտեր, որ նա զույգ է սպասում: Ցավոք, նա և զույգերը մահացան ծննդաբերության ժամանակ:

Իմ տատիկն ու պապիկը վշտի մեջ էին: Սակայն, վիշտն անմիջապես նրանց դարձրեց դեպի Տերը և Նրա Քավությունը: Առանց